

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ԱՐԱՐԱԿԱՆ ԾՈՑԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԹԵՄԻՆ
P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, 2. Տարի, Թիւ 240, Ուրբաթ, 18 ՅՈՒՆԻՍ, 2014

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

Աննա Շմառնեան. «Քուէթում մշակոյթի ծարաւ կայ...»

«Իմ Հայաստան» համահայկական 2-րդ փառատօնին առաջին անգամ մասնակցում էր Քուէթի «Շաքէ» պարախումբը: Գեղարուեստական ղեկավարը Աննա Շմառնեանն է: Ծանօթութեան ընթացքում պարզեցինք, որ Աննան նաև Քուէթի ազգային վարժարանի ուսուցչուհի է: Եւ հէնց այդտեղից էլ սկսուեց մեր զրոյցը.

- 21 տարի է՝ ապրում եմ Հայաստանից դուրս: Բնակվել եմ նախ Սիրիայում, իսկ երբ ամուսինս՝ Մանուկ Մանուկեանը, աշխատանքի հրաւեր ստացաւ՝ տեղափոխուեցինք Քուէթ: Ամուսինս Քուէթի միակ հայկական դպրոցի տնօրէնն է, իսկ ես հայերէնի ուսուցչուհի եմ աշխատում:

- Կ'ցանկանայի, որ մի փոքր վարժարանի մասին պատմէք:

- Քուէթի ազգային վարժարանը (նախակրթարան, միջնակարգ, ձեմարան բաժիններով) ունի 485 աշակերտ: Ուսուցումը կատարուում է երեք լեզուներով՝ հայերէն, արաբերէն, անգլերէն: Կրթութեան մակարդակը շատ բարձր է, մեր աշակերտներն ուսանում են աշխարհի լաւագոյն ԲՈՒՀ-երում:



Քուէթում մօտ 4 հազար հայ է ապրում: Երեխաները հիմնականում հայկական դպրոց են յաճախում, օտար վարժարաններ յաճախողների թիւը շատ քիչ է:

- Ինչպէ՞ս է ստեղծուել «Շաքէ» պարախումբը:

- Ես Հալեպում պարախումբ ունէի: Իսկ երբ տեղափոխվեցի Քուէթ, մտադիր չէի նորը ստեղծել: Բայց զիտէք, թէ լուրերն ինչ արագ են տարածուում: Առաջարկեցին պարախումբ ստեղծել, ես էլ չկարողացայ մերժել: Քուէթում մշակոյթի ծարաւ կայ, չունեն այն կատրերը, ովքեր կարող են այն վեր բարձրացնել:

Պարախումբն արդէն 7 տարուայ պատմութիւն ունի: Սկզբում շատ մեծ էր (մօտ 40 հոգի) և երկսեռ: Բայց հոսունութեան պատճառով հիմա միայն աղջիկներ են: Պարախումբի կազմը յաճախ է փոխուում: Մեր երիտասարդները նման են Քուէթի աւագներին: Շատերն են ուսանելու նպատակով մեկնում օտար երկրներ: Եւ ամէն տարի մենք մի քանի պարող ենք կորցնում: Ու այս տարի որոշեցինք միայն աղջիկներով պարապել:

Յոյս ունեմ, որ եկող տարի պարախումբը նորից երկսեռ կ'լինի: Տղաները, ովքեր հեռացել են ուսանելու, արդեն վերադառնալու են:

- Պարախումբի անունն ինչպե՞ս է ծնուել:

- Պարախումբը պատկանում է Քուէյթի ՀՕՄ-ի մեկուսի մասնաճիւղին: Մեր հիմնադիրը ՀՕՄ-ի ատենապետուհին էր, ով ինձ շատ քաջալերեց, աջակցեց: Սակայն մեր առաջին ելոյթի ժամանակ նա մահացաւ: Եւ մենք պարախումբը նրա պատուին կոչեցինք՝ Շաքէ:

- Համերգներ հաճա՞խ եք ունենում:

- Այո, ամէն տարի հաշուետու համերգ ենք տալիս: Միշտ հանդէս ենք գալիս շատ գեղեցիկ ծրագրով և պարտադիր նոր պարերով:

- Քուէյթից դուրս առաջին անգա՞մ եք ելոյթ ունենում:

- Այո, մեկ անգամ միայն Ապու Տապիում ենք ելոյթ ունեցել: Մեզ համար շատ յուզիչ էր Հայաստանում ելոյթ ունենալը: Շատ էինք սպասում, մի փոքր վախենում էինք, անհանգիստ էինք, բայց ամէն ինչ շատ յաջող անցաւ:

Փառատօնին տարբեր երկրներից պարախմբեր են մասնակցում: Քուէյթում մենք այլ գաղութների հետ կապ չունենք և համեմատուելու առիթ չենք ունեցել: Շատ ուրախ եմ, որ Հայաստանում այդ առիթն ընծայուեց մեզ:

Իսկ փառատօնի մասին շատ պատահական ենք իմացել: Մեր պարուհիներից մեկի ընկերը, ով Աւստրալիայում է բնակուում, ասել էր, որ իրենց պարախումբն ամռանը Հայաստանում փառատօնի է մասնակցելու: Աղջիկներն այդ մտքից շատ էին ոգևորուել ու ցանկանում էին անպայման մասնակցել: Հետաքրքրուեցինք, դիմեցինք «Իմ Հայաստան» փառատօնի կազմակերպիչներին և շնորհակալ ենք, որ ընդառաջեցին: Շատ ուրախ ենք, որ հնարատրութիւն ունեցանք մասնակցելու փառատօնին: Փորձը, նորութիւնները շատ կարևոր են պարախմբի համար:

- Այլ պարախմբերի հետ շփուելու հնարավորութիւն ունեցա՞ք:

- Որքան էլ զարմանալի հնչի, բայց չկարողացանք, որովհետև լեզուի խնդիր կար. մեծամասնութիւնը ռուսախօս էր: Երեխաներն ինձ ասում էին՝ դուք մեզ հորդորում էք, որ հայերէն խօսենք, բայց նայէ՛ք, բոլորը ռուսերէն են խօսում: Չգիտէի՝ ինչ պատասխանել: Արաբական երկրներում փորձում ենք մեր երեխաներին հայախօս պահել, իսկ Ռուսաստանում, Ռուսախոսները շատ արագ կորցնում են լեզուն:

Իմ այս մտահոգութիւնը յայտնեցի վարպետութեան դասերի ժամանակ ու խնդրեցի, որ պարուսոյցներն իրենց երեխաներին ոչ միայն պար սովորեցնեն, այլև հորդորեն, որ միմյանց հետ հայերէն խոսեն:

Իմ աղջիկների համար շատ հետաքրքիր էր իրենց հասակակիցների հետ ծանօթանալ, ընկերանալ, բայց հայախօս խմբերի հետ այնքան էլ չշփուեցին և մնացին իրենք իրենց հետ: Այս մասին պէտք է մտածել, շատ ցաւալի էր տեսնել, որ մեր երեխաներն իրենց մայրենին մոռանում են:

Զրուցավար՝ Լուսինէ Աբրահամեան

ՀԱՅԿԱԿԱՆ

Սերժ Սարգսեան Ծնորհաւորեց Եւրոպական Ցանձնաժողովի Նոր Նախագահը



Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան շնորհաւորական ուղերձ մը յղեց Ժան Քլոտ Եունքերին՝ Եւրոպական յանձնաժողովի նախագահի պաշտօնին ընտրուելու առիթով:

Նախագահ Սերժ Սարգսեան իր ուղերձին մէջ յոյս յայտնեց, որ Ժան Քլոտ Եունքերի պաշտօնավարութեան ընթացքին Եւրոպական յանձնաժողովին հետ Հայաստանի արդիւնաւէտ գործակցութիւնը պիտի շարունակէ զարգանալ եւ

խորանալ՝ բանալով փոխշահաւէտ համագործակցութեան նոր հեռանկարներ:

«Եւրոպական Միութեան հետ համագործակցութիւնը մեծապէս նպաստած է Հայաստանի մէջ արդիւնաւէտ կառավարման, ժողովրդավարութեան, մարդկային իրաւունքներու, օրէնքի գերակայութեան եւ այլ մարզերու մէջ բարեփոխումներու իրականացման, զորս մենք մեծապէս կը գնահատենք», Եւրոպական յանձնաժողովի նորընտիր նախագահին գրած է Հայաստանի նախագահը:

Տիգրան Սարգսեան Տեսակցեցաւ Միացեալ Նահանգներու Հայկական Կազմակերպութիւններու Ղեկավարներուն Հետ

Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի դեսպան Տիգրան Սարգսեան Ուաշինկթընի մէջ իր դիւանագիտական առաքելութեան սկսելու կապակցութեամբ հանդիպումներ ունեցաւ ամերիկահայ յառաջատար կազմակերպութիւններու՝ Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի եւ Ամերիկայի Հայկական համագումարի ղեկավարներուն հետ:



Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի նախագահ Քեն Խաչիկեանի եւ ներկայացուցիչ Կարօ Արմէնեանի, Ուաշինկթընի Հայ դատի գրասենեակի տնօրէն Արամ Համբարեանի եւ Ամերիկայի Հայկական համագումարի գործադիր տնօրէն Պրայան Արթունի հետ հանդիպումներուն ընթացքին քննարկուեցան Հայաստան – Միացեալ Նահանգներ յարաբերութիւնները, Հայաստան – սփիւռք կապերու հետագայ ամրապնդումը, Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման հոլովոյթը, Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման եւ ամերիկահայ համայնքին առնչուող հարցեր:

Զրուցակիցները համագործակցութիւնը շարունակելու փոխադարձ պատրաստակամութիւն յայտնեցին:

«Այս ձեռով Ռուսիա Իբրեւ Դաշնակից Պիտի Կորսնցնէ Հայաստանը» Կ'ըսէ Հրանդ Մարգարեան

Ըստ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի, մեծաքանակ սպառազինութիւն վաճառելով Ազրպէյճանին՝ Ռուսիա իբրեւ դաշնակից պիտի կորսնցնէ Հայաստանը:

«Ազատութիւն» ձայնասփիւռի կայանին հետ հարցազրոյցին ընթացքին արձագանգելով այն հարցադրումին, թէ Ռուսիա կը պնդէ, որ ատիկա միայն առեւտուր է, Մարգարեան յայտնեց, որ ասիկա կը նշանակէ, թէ առեւտուրը կը գերակշռէ բարեկամական (եթէ այդպիսիք կան քաղաքականութեան մէջ) յարաբերութիւնները: «Ինծի կը թուի, որ պէտք է Ռուսիա անդրադառնայ, որ այս ձեռով ինք չի կրնար երկար ժամանակ իր շուրջը դաշնակիցներ պահել: Ինք պէտք է հասկնայ, որ այս ձեռով ինք պիտի կորսնցնէ Հայաստանը: Որովհետեւ միշտ ելքեր կարելի է գտնել, միշտ ելքեր կարելի է փնտռել, միշտ ձեւեր կան՝ դժուար, դիւրին ճամբաներ, որոնց համար ծանր գին կը վճարենք, բայց կրկին մեզի համար ելք կ'ըլլայ: Բայց չեմ կարծեր, որ մենք այնքան անճարակ ենք, որ ուզենք թէ չուզենք, մեր միակ ելքը Ռուսիոյ հետ ըլլայ: Պէտք է Ռուսիա ինք նաեւ ասոր գիտակցի: Եւ պէտք է հասկնայ, որ սխալ մօտեցումը կրնայ պատճառ դառնալ, որ ինք շատ աւելի մեծ կորուստներ ունենայ»:



Հրանդ Մարգարեանին կը թուի, թէ շրջանին մէջ հաւասարակշռութիւն պահպանելը նաեւ Ռուսիոյ շահերէն կը բխի: «Բնականաբար, ասիկա պարզ բան մը չէ, որ մենք կարենանք անոր վրայէն լուր անցնիլ: Ասիկա, կարծեմ, պէտք է մեր մէջ ընդվզում ստեղծէ: Ասիկա միայն ձեռով մը կրնար ընդունելի դառնալ, որ այն, ինչ որ կը վաճառէինք Ազրպէյճանին, մեր բաժինի գինն ալ Ազրպէյճանէն առնէր, բայց մեզի տար անվճար»:

Հայաստանի դաշնակից Ռուսիա վերջին տարիներուն դարձած է Ազրպէյճանի յարձակողական նշանակութեան սպառազինութիւն վաճառող թիւ մէկ երկիրը: Անցեալ տարուան Օգոստոսին Պաքուի մէջ Փութինի հետ տեղի ունեցած միացեալ մամլոյ ասուլիսին ընթացքին Իլհամ Ալիեւ հրապարակեց ռուս-ազրպէյճանական ռազմա-արհեստագիտական համաձայնագիրի ընդհանուր ծաւալը՝ 4 միլիառ տոլար՝ ակնարկելով, որ ատիկա աճելու միտում ունի:

Խօսելով Եւրասիական միութեան Հայաստանի անդամակցութեան հոլովոյթին մասին՝ Մարգարեան շեշտեց, որ Դաշնակցութեան համար անընդունելի է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի սահմանին վրայ մաքսատան տեղադրումը:

Մինասեան. «Հայաստանի Եւրասիական Տնտեսական Միութեան Անդամակցութեան Զգձգումը Միայն Ազրայէճանական Գործօնով Զէ Պայմանաւորուած»

Հայաստանի Ազգային Ժողովի ՀՅԴ խմբակցութեան պատգամաւոր Արծուիկ Մինասեան համոզուած է, որ արտաքին քաղաքականութեան հարցով պէտք է Հայաստանի դիմադրողականութիւնը բարձրացնել:



«Պէտք է հասկնալ, որ Հայաստանի ապագան «զարգանալ առանց զիջումներու» ըմբռնումին մէջ է: Աշխարհի որեւէ երկրի մէջ չկայ զիջումով յաջողութեան հասնելու որեւէ բանաձեւ: Եթէ զիջում, ապա բացառապէս հանդուրժողականութեան համար, որ կարելի է սերմանել, այլ բան զիջելու կարելիութիւն չկայ», ըսաւ պատգամաւորը՝ պատասխանելով Tert.am-ի այն հարցումին, թէ նախագահ Սարգսեանի յայտարարութենէն կարելի՞ է եզրակացնել, որ Եւրասիական տնտեսական միութեան անդամակցութեան հարցին ձգձգումը կապ ունի Լեռնային Ղարաբաղի հարցին հետ, եւ ատիկա պատասխան էր Ռուսիոյ, որ Հայաստան որոշ միութեան անդամակցելու համար զիջումներ պիտի չկատարէ:

Նշենք, որ Լատինական Ամերիկա կատարած պետական այցելութեան ծիրին մէջ արժանօրինեան «Լա Նասիոն» եւ «Քլարիմ» պարբերականներուն տուած հարցազրոյցին մէջ նախագահ Սերժ Սարգսեան ըսած էր, թէ հայ ժողովուրդին կը մտահոգէ Ռուսիոյ կողմէ զենքի վաճառքը Ազրայէճանին:

«Սկիզբէն բոլորին պէտք է պարզ ըլլայ՝ թէ՛ Ռուսիոյ, թէ՛ Ղազախստանին, թէ՛ Պիելըռուսիոյ, աւելի եւս՝ Ազրայէճանին, որ Հայաստանի Հանրապետութեան որեւէ իշխանութիւն երբեք չ'ըսեր, որ յանուն համարկումի մենք պատրաստ ենք զիջումներ կատարելու», ըսաւ ան:

Արծուիկ Մինասեան չբացառեց, որ Հայաստանի Եւրասիական տնտեսական միութեան անդամակցութեան ձգձգման հարցով ազրայէճանական գործօնը կապ ունի, սակայն, ըստ անոր, հարցը միայն ատիկա չէ: «Ես կը կարծեմ, որ թէ՛ Ղազախստան, թէ՛ Ռուսիա եւ թէ՛ Պիելըռուսիա միատեսակ պատկերացում չունին Հայաստանի համարկման եւ տնտեսութեան վերաբերեալ: Եւ եթէ անոր գումարենք, որ, այնուամենայնիւ, ազրայէճանական լուծում կ'աշխատի, ապա ակնյայտ կը դառնայ, որ բազմաթիւ հարցեր ու խնդիրներ պիտի դրուին, որոնք շուտափոյթ լուծման ակնկալիք չեն կրնար ունենալ», ըսաւ ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ հաշուի առնելով տնտեսական գործօնը, կարելի՞ է, որ Հայաստան իր տնտեսութեամբ բեռ ըլլայ այդ երկիրներուն համար եւ այդ պատճառով չեն ողջուներ անոր անդամակցութիւնը, Մինասեան հակադարձեց. «Ես չեմ ըսեր, որ բեռ է, պարզապէս ամէն մէկ երկիր իր շահը գիտակցելով, եւ ինչու չէ նաեւ ազրայէճանական լուծումի որոշակի ազդեցութիւնները կը դրդեն, որ Հայաստանի նկատմամբ վերապահ մօտեցում ըլլայ, ասիկա բնական է: Այլ խնդիր է, որ մենք մեր շահերը պէտք է փորձենք իսկապէս առջեւ մղել:

Եթե անոր իբրև արդիւնք, օրինակ, հայկական ապրանքատեսակները պետք է ստանան որոշակի արտոնութիւններ այդ շրջանին մէջ, եւ ասիկա որեւէ առանձին երկիր կրնայ դիտել իրեն համար իբրև Հայաստանի կտրուածքով բեռ, ապա ասիկա իրենց խնդիրն է: Եթե քաղաքական հարցով է, ապա անիկա նորէն իրենց խնդիրն է եւ պետք չէ մեզի համար դառնայ սահմանափակող վարքագիծ կամ ալ զիջինք որոշ բան, որպէսզի ստանանք որոշ բան, այս ձեւը ճիշդ չէ»:

Իսկ ինչո՞ւ միայն հիմա անհրաժեշտութիւն յառաջացաւ ըսել, որ մենք մտահոգուած ենք Ռուսիոյ կողմէ Ազրպէյճանին զենքի վաճառքէն, Արծուիկ Մինասեան նախ ընդգծեց, որ չի կարծեր, որ այդ հարցին բարձրացումը կապուած է Եւրասիական տնտեսական միութեան կամ Մաքսային միութեան անդամակցութեան շրջանակներուն մէջ խոչընդոտներու հետ:

«Աւելի շատ իսկապէս Ազրպէյճանի յարձակողական պահուածքի, կեցուածքի հետ կապուած է, ինչ որ արդիւնք է նաեւ անոր, որ զենքերու գնումը Ռուսիայէն է: Ռուսիոյ պաշտօնատար առանձին անձեր կը յայտարարեն, թէ զենքի վաճառքը առետուր է, հիմա առետուրը վերածուեցաւ այլեւս սպառնալիքի, եւ չիօսիլ անոր մասին, չբարձրաձայնել, ու նաեւ չհրաւիրել համապատասխան ուշադրութիւն ու չձեռնարկելու քայլերու սխալ կ'ըլլար», ըսաւ ան:

Պատասխանելով այն հարցումին, թէ Սերժ Սարգսեանի արձագանգը ուշացած չէ՞, ՀՅԴ-ի պատգամաւորը ըսաւ, թէ տրուած ըլլալով, որ ինք չի տիրապետեր բոլոր այն գործիքակազմին, թէ երկրի ղեկավարութիւնը ի՞նչ քայլեր կ'իրականացնէ, կը դժուարանայ պատասխանել. «Բայց այն, որ «ուշ, բայց ոչ ուշացած»-ի դրութեամբ պետք է աշխատիլ, այս պարագային միանշանակ է: Այսինքն՝ մենք առաւելագոյնս պետք է թէ՛ միջազգային հանրութեան, թէ՛ յատկապէս Ռուսիոյ ուշադրութիւնը հրաւիրենք այդ փաստի վրայ, որ, այո՛, ազրպէյճանական զենքի գնումները, զինուծի հարստացումը, ասիկա նաեւ արդիւնք է, պատճառ է ռազմատենչ կեցուածքի: Հետեւաբար, ամէն ինչ պետք է ընել՝ յարձակումին դէմ կենալու»:

Թուրքիոյ Վաքըֆ Գիւղին Մէջ Մնացած Վերջին Քեսապահայերը Վերադարձած Են Քեսապ



«Ակօս» կը հաղորդէ, որ Քեսապ վերադարձած է թուրք-սուրիական սահմանի թրքական կողմը գտնուող հայկական Վաքըֆ գիւղին մէջ գտնուող քեսապահայերու վերջին խումբը:

Միայն վեց քեսապահայեր փաստաթուղթերու բացակայութեան պատճառով մնացած էին Վաքըֆ գիւղին մէջ: Մէկուկէս ամսուան սպասումէ ետք վերջապէս վերադարձած են Քեսապ:

Նշենք, որ 15 Յունիսին Քեսապի վերագրաւուելէն ետք Լաթաքիոյ մէջ ապաստանած քեսապահայերը սկսած էին վերադառնալ իրենց պապենական օրրանը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Յիշել Ու Պատուել

Ամբողջ ազգով կը խոնարհինք հայրենիքի սահմանները պաշտպանող մեր զինուորներու ծառայութեան առջեւ: Կը խոնարհինք մանաւանդ սահմանները պաշտպանելու նուիրական գործին ընթացքին իրենց կեանքը զոհաբերած, նահատակուած զինուորներու յիշատակին առջեւ:

Դժբախտաբար, վերջերս յաճախակի դարձած են նահատակութիւններու դէպքերը, որոնց մեր հաւաքական անդրադարձը, վստահ չեմ, որ ըստ արժանւոյն կ'արտայայտէ մեր հաւաքական գնահատանքը՝ զինուորներու գերագոյն զոհաբերութեան:

Այո՛, նահատակութեան օրն իսկ պաշտօնապէս կը գնահատուի զինուորի սխրանքը՝ մարտական շքանշանով: Յետո՛յ:

Բանակը իր ականդական ծէսերով ու յիշատակումով կը յարգէ եւ կը պատուէ իր զինուորի նահատակութիւնը:

Մե՞նք:

Կրնա՞նք յիշել, թէ մեր եկեղեցիներուն մէջ, ինքնաբերաբար, առանց յատուկ պատուերներու, մեր հոգեւորականները (իրենց նախաձեռնութեամբ կամ հոգաբարձուներու թելադրանքով) հոգեհանգստեան պաշտօն կատարած ըլլան նախորդ շաբթուան ընթացքին զոհուած հայ զինուորներուն համար: Քարոզին մէջ ալ կարելի չէ՞ յիշատակել նահատակութիւնը, արժեւորել զայն՝ ամրագրելով անոր կարեւորագոյն տեղը մեր արժեքային համակարգին մէջ:

Կամ՝ մեր ձեռնարկներուն եւ հանդէսներուն ընթացքին, մէկ րոպէ լռութեամբ չե՞նք կրնար յարգել նահատակի յիշատակը:

Կամ՝ մեր ընտանեկան հաւաքոյթներուն ընթացքին, չե՞նք կրնար յիշել ու մեր երախտագիտութիւնը յայտնել նահատակի ծնողքին, ընտանիքին, որոնք այդ պահուն եւ ընդմիջտ խոր վիշտը կ'ապրին ու պիտի ապրին իրենց թանկագին կորուստին համար: Մեր զուակներուն հայրենասիրութիւն ներարկելու գործին չի՞ նպաստեր նման վերաբերմունք:

Այս բոլորը եթէ ծրագրուած ըլլան, անպայմա՛ն թերացումներ ու մոռացումներ կը պատահին: Բայց ճի՛շդ կ'ըլլայ, որ յիշատակումները ըլլան բնական, ինքնաբերիկ:

ԱԲՕ ՊՈՂԻԿԵԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

**Ասատ. «Սուրիացի Ժողովուրդին Տոկունությունը
«Արաբական Գարնան» Մահը Հոչակեց»**

Չորեքշաբթի օր կեսօրին Դամասկոսի մեջ տեղի ունեցավ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի նախագահության երրորդ նստաշրջանի երդման արարողությունը: Սուրիոյ նախագահական պալատին մեջ կազմակերպուած արարողութեան ներկայ էին մեծ թիւով երեսփոխաններ, ինչպէս նաեւ իսլամ եւ քրիստոնէայ հոգեւորականներ:

Ասատ նախագահ ընտրուած էր անցեալ ամիս՝ ստանալով ընտրողներու ձայներուն 88.7 առ հարիւրը:

«3 տարի եւ 4 ամիս ետք ժողովուրդը ուզեց եւ գործադրեց», ըսաւ ան՝ աւելցնելով, որ նախագահական ընտրութեան մասնակցութեան բարձր համեմատութիւնը հանրաքուէ մըն էր ընդդէմ ահաբեկչութեան եւ տապալեց մեծ պետութեանց ու ազդեցիկ ղեկավարներու ծրագիրները:

Ան ողջունեց նախագահական ընտրութեան ընթացքին իր մրցակիցները՝ նշելով, որ անոնք ժողովրդավար Սուրիոյ իսկական պատկերը ցոյց տուին՝ աւելցնելով. «Ապագան ժողովուրդին կը պատկանի եւ ոչ թէ ուրիշին»:

Ասատ ըսաւ, որ շրջանին մեջ գոյութիւն ունի մեծ ծրագիր մը, որ Սուրիոյ սահմանները պիտի շրջանցէ, եւ ահաբեկչութեան աջակցած պետութիւնները սուղ գին պիտի վճարեն:

Ան յայտնեց. «Էրտողան չի համարձակիր Աքսայի մզկիթին մեջ նամագ կատարել փափաքիլ, ինչպէս փափաքեցաւ Օմայատներու մզկիթին մեջ նամագ կատարել»:

Սուրիոյ նախագահը ըսաւ, որ յառաջիկայ հանգրուանին ուշադրութիւնը պիտի կեդրոնանայ նահատակներու ընտանիքներուն եւ անյայտ ճակատագիր ունեցողներուն վրայ:

Ասատ յայտնեց, որ շրջանին մեջ տեղի ունեցողը զայն մասնատելու համար է եւ բռնատէր պետութիւններու կողմէ գործադրուող արեւմտեան ծրագիր մը՝ աւելցնելով. «Այն ինչ որ Սուրիոյ մեջ տեղի կ'ունենայ, ուղղակի կերպով կապ ունի Պաղեստինի իրադարձութեանց հետ»:

«Սուրիացի ժողովուրդին տոկունութիւնը «Արաբական գարնան» մահը հոչակեց»:

Ասատ ըսաւ. «Պիտի չհանգչինք, մինչեւ որ Հալէպը ապահով ու հանգիստ դառնայ»՝ աւելցնելով. «Պիտի չմոռնանք մեր սիրելի Ռաքքան, զոր պիտի փրկենք ահաբեկչութենէն»:

«Պիտի չմոռնանք լիբանանեան հաւատարիմ Դիմադրութեան հերոսները, որոնք բանակի կողքին պատուաբեր ճակատամարտեր մղեցին», ըսաւ Ասատ, որ նաեւ շնորհակալութիւն յայտնեց Իրանի, Ռուսիոյ եւ Չինաստանի՝ «սուրիացի ժողովուրդին որոշումը յարգելնուն համար»:

Նշենք, որ արարողութենէն ետք Դամասկոսի մեջ հրասանդէ արձակուած երկու հրթիռներ հարուածեցին Սուրիոյ պետական պատկերասփիւռի կայանի շէնքը:

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

**Մակեդոնիոյ Եւ Թրակիոյ Հ. Գթ. Խաչի
Խալքիտիքի Ամառանոցը Իր Հիւրընկալ
Գիրկին Մէջ Ընդունեց Աւելի Քան 100 Բանակող**



Խալքիտիքի Փեֆքոխորի շրջանին մէջ, 25-րդ շարունակական տարին ըլլալով, իր դռները բացաւ Մակեդոնիոյ եւ Թրակիոյ Հայ գթութեան խաչի Շրջանային վարչութեան ամառանոցը, ուր կը հիւրընկալուին 100-է աւելի հայ պատանի-երիտասարդներ:

Ինչպէս ամէն ամառ, Խալքիտիքի ծառախիտ բանակավայրը երեք շաբթուան ընթացքին ժամադրավայրը պիտի հանդիսանայ հայ երիտասարդութեան: Թրակիայէն եւ Թեսաղոնիկէէն մասնակցող բանակողներու կողքին պիտի ըլլան Աթէնքէն եւ Քոքինիայէն, ինչպէս նաեւ Հայաստանէն ու Լիբանանէն բանակողներ: 10 Յուլիսին բանակավայր հասան բոլոր պատանիները, որոնց հոգատարութիւնը ստանձնած են Մակեդոնիոյ եւ Թրակիոյ Հայ գթութեան խաչի Շրջանային վարչութեան անդամները եւ վրանապետի դերով օժանդակ երիտասարդներ եւ երիտասարդուհիներ, որոնք ամառանոցի

լման տեւողութեան ընթացքին ներկայ պիտի ըլլան ու պիտի հոգան բանակող պատանիներու բոլոր կարիքներուն:

Յատուկ ջանք տարուած է ցած պահելու համար ամառանոցի մասնակցութեան սակը, նկատի առնելով, թէ մեր հայրենակիցներէն շատեր դժուարութեամբ կը դիմագրաւեն տնտեսական տագնապը: Բանակողներու թիւը կը հաստատէ, որ Հայ գթութեան խաչի տարած ճիգը կ'արժէ աւելիով. միութեան նիւթական ներդրումով կարելի եղաւ նուազեցնել տնտեսական դժուարութիւններ դիմագրաւող ընտանիքներուն բեռը:



Բանակումին կը մասնակցին նաեւ լիբանանահայ 11 պատանի-պարմանուհիներ եւ օգնական մը՝ Լիբանանահայ օգնութեան խաչի Շրջանային վարչութեան օժանդակութեամբ: Ամառանոցի յայտագիրը հիմնուած է դաստիարակչական-զուարճանքի պահերով լեցուն երեք շաբթուան ծրագրի մը վրայ, որուն մէջ ներառուած են ծովու լոգանքի, պտոյտներու, դասախօսութիւններու, երգի ու պարի ուսուցման եւ ընկերային երեկոններու ժամեր:

Ամառանոցի պաշտօնական փակման հանդէսը ծրագրուած է շաբաթ, 26 Յուլիսին, երեկոյեան ժամը 7:00-ին. այդ օր բոլորին ներկայութիւնը մեծ հաճոյք պիտի պատճառէ բանակողներուն եւ կազմակերպողներուն:

Բանակումը պիտի աւարտի յաջորդ օր՝ կիրակի, 27 Յուլիսին:

Հայկական Մշակութային Նախաձեռնություններ Ֆրանսայի Մեծ Քաղաքներուն Մէջ



Հովանաւորութեամբ Հայաստանի մշակոյթի նախարարութեան, կազմակերպութեամբ Ֆրանսահայ երիտասարդական միութեան, աջակցութեամբ Ֆրանսայի մէջ Հայաստանի դեսպանութեան, վերջերս տեղի ունեցան Հայաստանի պարարուեստի պետական «Բարեկամութիւն» համոյթին հիւրախաղերը, որոնք իրենց աւարտին հասան 5 Յուլիսին՝

Մարսելի Համագումարներու պալատին մէջ տեղի ունեցած համերգով:

Ելոյթներ կայացան Փարիզի, Լիոնի եւ Մարսելի նշանաւոր սրահներուն մէջ. հայ երիտասարդներ նորարարական շունչով ու երաժշտական տպաւորիչ ընտրանիով մեկնաբանեցին Կոմիտասի, Սայաթ Նովայի, Արամ Խաչատրեանի, Վիվալտիի, Մոցարթի եւ այլ երաժիշտներու ստեղծագործութիւններէն կտորներ:

Յունիս 28-ին, ի պատիւ Քանատահայոց թեմի նորընտիր առաջնորդ Աբգար վրդ. Յովակիմեանի, Լաւալի մէջ տեղի ունեցաւ «Մասնայ երկիր» ժողովրդական երգի-պարի երեկոյ՝ մասնակցութեամբ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ «Մասուն» պարախումբին, ընդհանուր գեղարուեստական ղեկավար՝ Ճօ Աւագեան: Մասնայ աւանդական եւ հայկական երգերով ելոյթ ունեցաւ Հայաստանէն ժամանած հանրայայտ երգիչ Ռուբէն Սասունցի:

Յունիս 29-ին Աբգար վրդ. Յովակիմեան իր անդրանիկ պատարագը մատուցեց Մոնրէալի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ս. պատարագի ընթացքին տեղի ունեցաւ առաջնորդական գաւազանի փոխանցում, որմէ ետք օրուան պատգամն ու քարոզը փոխանցեց նորընտիր առաջնորդ սրբազանը:

Աւարտին եկեղեցւոյ «Մարի Մանուկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային ընդունելութիւն՝ որպէս բարի գալուստ առաջնորդ սրբազանին եւ ի շնորհակալութիւն եւ հրաժեշտ Նաթան արք. Յովհաննիսեանի:

Երաժիշտ Հայրապետ Առաքելեանին Ելոյթը Պոսթըն Փափսի Հայկական Երեկոյին



Հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ Հայ մշակոյթի բարեկամներու միութեան, 13 Յունիսին տեղի ունեցաւ «Պոսթըն փափս»-ը, որ կը կատարուի տարեկան դրութեամբ:

Այս տարուան «Պոսթըն փափս»-ի հայկական երեկոյի հիւրն էր երիտասարդ երաժիշտ Հայրապետ Առաքելեանը, որ սաքսօֆոնով նուագեց արժանթինցի Ասթոր Փիացոլայէն քանի մը կտորներ:

Ղեկավարութեամբ մայեսթրօ Քիթ Լոքըրթի, «Պոսթըն փափս»-ի նուագախումբը ընկերակցեցաւ Առաքելեանի ելոյթին: Յայտնենք, որ ի յիշատակ Արամ Ղարաբեկեանի՝ նուագախումբը ներկայացուց Արամ Խաչատուրեանի «Գայեանէ»-էն կտոր մը: Լոքըրթ անդրադարձաւ

Ղարաբեկեանին կատարած աշխատանքին՝ թե՛ Միացեալ Նահանգներու եւ թե՛ Հայաստանի մէջ:

Հարկ է նշել, որ Առաքելեան տիրացած է մրցանակներու, որոնց կարգին՝ Գերմանիոյ երիտասարդ երաժիշտներու (2009), Անքոնայի (Իտալիա) եւ Նանթի (Ֆրանսա) մրցանակները:

«Քեսապ՝ Պատառ Մը Հայաստան» Ժապաւենի Ցուցադրութիւնը

Կազմակերպութեամբ Ս. Երրորդութիւն եկեղեցոյ հոգաբարձութեան, 22 Յունիսին, եկեղեցոյ սրահին մէջ ցուցադրուեցաւ Վաչէ Սողոմոնեանի պատրաստած «Քեսապ՝ պատառ մը Հայաստան» ժապաւենը:

Հոգաբարձութեան անդամ Վարուժան Տէր Սիմոնեան նկատել տուաւ, որ ժապաւենին մէջ ներկայացուած են Քեսապի տեսարժան վայրերը, որոնք մեր հոգիներուն մէջ պիտի թարմացնեն անցեալի քաղցր յիշատակները: Վաչէ Սողոմոնեան ներկայացուց իր կենսագրականը եւ յայտնեց, որ սրտի պարտք մը կատարած ըլլալու գոհունակութեամբ բաժնեկից կը դարձնէ իր գիւղի անցեալի պատմութիւնն ու աւանդութիւնները:

Ժապաւենը լայնօրէն կ'անդրադառնայ Քեսապի ժողովուրդի առօրեային, զբաղումներուն, աւանդութիւններուն, շրջաններուն մէջ գործող համայնքներուն, եկեղեցիներուն, չորս դպրոցներուն եւ միութիւններուն: Ասոնց կողքին, կը ցուցադրուին նաեւ տնտեսական մարզի զանազան երեւոյթներ, ինչպէս՝ շերամաբուծութիւն, այգեգործութիւն:

Աւարտին Քեսապի Ուսումնասիրաց միութեան ներկայացուցիչ Ճորճ Մաշիկեան տեղեկութիւններ փոխանցեց քեսապահայերուն մասին:

Հայ Անուանի Յօրինող Կոնստանդին Պետրոսեանին Պարգևատրումը



Յունիս ամսուան ընթացքին տեղի ունեցաւ Փրովիտենսի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցոյ հարիւրամեակին նուիրուած հանդիսաւոր համերգ: Համերգի ընթացքին Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին կողմէ հայ անուանի յօրինող Կոնստանդին Պետրոսեան պարգևատրուեցաւ «Սուրբ Սահակ-Մեսրոպ» շքանշանով:

Կոնստանդին Պետրոսեան հեղինակ է սիմֆոնիք, երգչախումբային, սենեկային, գործիքային եւ ձայնային գործերու: 1976-80 թուականներուն ան եղած է Հայաստանի ձայնասփիւռի եւ պատկերասփիւռի էտրատային-սիմֆոնիք նուագախումբի ղեկավար: Ան հեղինակային համերգներ ունեցած է Երեւանի Ա. Խաչատուրեանի անուան համերգային մեծ դահլիճին եւ տուն-թանգարանին մէջ: 1976-էն մինչեւ օրս Հայաստանի յօրինողներու միութեան անդամ է: Ներկայիս ան նախագահն ու գեղարուեստական ղեկավարն է Ռոտ Այլընտի Հայկական փառատօն կազմակերպութեան, Փրովիտենսի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցոյ մշակոյթի եւ երաժշտութեան գեղարուեստական տնօրէնն է, ղեկավարն է նաեւ Ռոտ Այլընտի եւ Պոսթընի հայկական երգչախումբերու: Ստացած է զանազան յուշագրեր եւ մետալներ:

ՄԱՐԶԱԿԱՆ

Մտորումներ` 2014-ի Մոնտիալեն

32 երկիրներու ֆութպոլի ազգային կազմերը իրաւունք ստացած էին մասնակցելու 2014-ի Մոնտիալին, որ տեղի ունեցաւ Պրագիլի գանազան քաղաքներու 12 խաղավայրերուն վրայ: Բուն պայքարէ մը ետք, աւարտականի հասան Գերմանիոյ եւ Արժանթինի համեստ խումբերը:

Կիրակի, 13 Յուլիսին Ռիօ տը Ժանէյրոյի հոչակաւոր «Մարաքանա» խաղավայրին վրայ 80 հազար հոգիի ներկայութեան տեղի ունեցաւ այս ճակատագրական հանդիպումը:

Անիկա վերջ գտաւ Գերմանիոյ արդար յաղթանակով (1-0):



Ասիկա 4-րդ անգամն է, որ Գերմանիա կը հանդիսանայ աշխարհի ախոյեան:

Արդարօրէն պիտի խոստովանիմ, որ մրցաշարքի կազմակերպութիւնը գնահատելի էր, ըլլայ խաղավայրերուն մէջ եւ ըլլայ անոնցմէ դուրս:

Յիշատակութեան արժանի ոչ մէկ անախորժ դէպք պատահեցաւ. 30 հազար ոստիկաններ հսկեցին մրցաշարքի ապահովութեան:

Ինչ կը վերաբերի ֆութպոլի մակարդակին, բացի քանի մը հաճելի մրցումներէ, միւսները մնացին միջակ մակարդակի: Նոյնն էր մրցաշարքին իրաւարարութեան պարագային: Իրենց գործած աններելի սխալներուն պատճառով քանի մը իրաւարարներ արդէն շուտով տուն դրկուեցան:

Տեղի ունեցած 64 մրցումներուն 171 կոլ նշանակուեցաւ, 13 փենալթի սուլեցին մրցաշարքի 25 կեդրոնի իրաւարարները, 187 դեղին եւ 10 կարմիր քարտ գործածուեցաւ:

Մրցաշարքի ամենէն տարիքոտ խումբը Արժանթինի խումբն էր (միջինը` 28 տարեկան), իսկ ամենէն երիտասարդ կազմը Ղանայի խումբն էր (23): Ամենէն տարիքոտ մարզիկը բոլոր մոնտիալներուն` քոլումպիացի բերդապահ Մոնտրակոնն էր (43 տարեկան), իսկ ամենէն երիտասարդը քամերունցի յառաջապահն էր` 18 տարեկան: Մրցաշարքի կոլսքորըրը 6 կոլով հանդիսացաւ քոլումպիացի Ռոտրիկեզ:

Իսկ 20 մոնտիալներուն կոլսքորըրը գերմանացի Քլոզէն հանդիսացաւ (16 կոլով), իսկ երկրորդը` պրագիլցի Ռոնալտոն (15):

Պրագիլ – Քոլումպիա մրցումին սպանացի իրաւարարը ճիշդ 54 ֆաուլ սուլեց. ասիկա մոնտիալի մրցանիշ է, մինչ միջինը 25-30 է...

Յիշելը տեղին է, որ այս մրցումին պրագիլցի Նէյմարին կոնակի մէկ ոսկորը վնասուեցաւ քոլումպիացի մարզիկի մը պատճառով:

Պելճիքա – Ռուսիա մրցումին (1-0) Պելճիքայի 11 մարզիկներն ալ օտար խումբերէ կը խաղան, իսկ Ռուսիոյ ազգային խումբի 11 մարզիկներն ալ Ռուսիոյ խումբերէն կը խաղան, ասիկա շատ հետաքրքրական է անշուշտ:

Պեկճիքա – Միացեալ Նահանգներ մրցումին (2-1) Ամերիկայի 35 տարեկան բերդապահը՝ Հաուըրտ 16 ստոյգ կողէ ազատեց իր բերդը. Հաուըրտի այս մեծ յաջողութեան պատճառով, Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարը եւ նախագահ Օպամա հեռաձայնով շնորհաւորեցին իրենց աննման բերդապահը:

Գիտէի՞ք արդեօք, թէ Ռուսիոյ ազգային խումբի իտալացի հոշակաւոր մարզիչին՝ Քափելլոյին ամսական եկամուտը ճիշդ 8 միլիոն եւրօ է:

Այս մոնտիպալին Ռուսիոյ տուած գէշ արդիւնքներէն ետք Ռուսիոյ արդարութեան նախարարը բուռն կերպով դատապարտեց Քափելլոն եւ ըսաւ, որ գող մըն է ան՝ աւելցնելով, որ պէտք է ան շուտով հրաժարի իր պաշտօնէն:



Ինչպէս վերը յիշեցի, այս մրցաշարքին, լաւ մրցումներու ալ ակնատես եղանք:

Հոլանտա – Քոսթա Ռիքա (0-0) 120 վայրկեաննոց մրցումին երկուստեք ճիշդ 26 վտանգաւոր կողի առիթներ ստեղծուեցան, անոնցմէ 3-ը բերդի սինէն զապուեցան: Ի վերջոյ Հոլանտան փենալթիներով՝ 4-3 արդիւնքով յաղթական դուրս եկաւ:



Վերջապէս արհեստագիտութիւնը ֆութպոլի աշխարհ ալ մտաւ: Արդարեւ, ՖԻՖԱ-ն բարձր արհեստագիտութեան 7 քամերա գետեղեց իւրաքանչիւր բերդին կողմերը. գնդակը բերդի գիծէն ներս անցնի թէ ոչ, երկվայրկեանի մը մէջ լուռ կը տրուէր իրաւարարի ձեռքի ժամացոյցին:

Այս մոնտիպալին երկու անգամ պատահեցաւ այդ մէկը: Ասիկա ՖԻՖԱ-ին արժած է ճիշդ 500 հազար եւրօ:

Այս մրցաշարքի անակնկալ խումբը անկասկած Քոսթա Ռիքան էր, իսկ Ալճերիոյ կազմն ալ տպաւորեց բոլորը:

Իսկ աչքի զարնող մարզիկները հետեւեալներն էին. հոլանտացի Ռոպէն, պրագիցի Նէյմար, գերմանացի Միլլըր, քլումպիացի 22 տարեկան Ռոտրիկէս, արժանթինցիներ Տի Մարիա եւ Մեսսի: Թէեւ Մեսսին լաւ չսկսաւ մրցաշարքը, սակայն նշանակած յաղթական կողերով մեծ բաժին ունեցաւ, որ իր խումբը հասնի աւարտականին: Նէյմար եւ Տի Մարիա ծանրօրէն վիրաւորուելով չլրցան շարունակել մրցաշարքը:

Ինչ կը վերաբերի Լուիս Սուարեսին, ան այսօր Լիվըրփուլի խաղացողն է:

Այս տարի Սուարես 31 կող նշանակած է: Երկու ամիս առաջ Սպանիոյ նշանաւոր խումբը՝ Ռէալ Մատրիտ, ուզեց Սուարեսը իր կազմին միացնել: Լիվըրփուլ 102 միլիոն եւրօ պահանջեց Սուարեսին համար եւ «մոնտիպալէն ետք սեղան կրնանք նստիլ» ըսաւ Ռէալին:

Սակայն անախորժ դէպք մը պատահեցաւ... Ուրուկուէլ – Իտալիա մրցումէն (2-1) ետք ջղայնացած Սուարես իր մրցակիցին ուսը խածաւ եւ վտարուեցաւ օրուան իրաւարարին կողմէ: Թէեւ Սուարես ներում հայցեց համայն աշխարհէն, սակայն ՖԻՖԱ-ի պատիժը մեծ եղաւ, որովհետեւ Սուարեսի կողմէ ասիկա նմանօրինակ երրորդ արարքն էր: Ասկէ առաջ ալ ան երկու անգամ խածած էր հակառակորդ մարզիկներու մարմինները...

ՖԻՖԱ-ն 4 ամիս կախակայեց Սուարեսը եւ նիւթական մեծ տուգանքի ենթարկեց զինք:

Յետոյ Ռէալ Մատրիտ հրաժարեցաւ գնելէ Սուարեսը՝ իմանալով վերջին լուր մը, ըստ որուն Պարսելունան 80 միլիոն եւրոյի համաձայնութեան հասած էր Լիվըրփուլի հետ: Սակայն Սուարես առաջին 11 մրցումին պիտի չկարենայ դաշտ ներկայանալ «Լա լիկա»-ին: Սպասենք, թէ ի՞նչ կրնայ պատահիլ:

Ուրեմն, կիսաարտականին մնացին մրցաշարքի երկու հաւանական ախոյեան նկատուող Պրազիլը եւ Գերմանիան:

Մրցումը սկսաւ, պրազիլցիք առաջին 10 վայրկեանին քանի մը անգամ նեղի մատնեցին Գերմանիոյ բերդը, սակայն 11-րդ վայրկեանէն սկսեալ սկսան տոկուն գերմանացիներուն վտանգները եւ տեղատարափ կոլերը: Երեւակայեցէք, 18 վայրկեանի ընթացքին, այսինքն 11-29-րդ վայրկեանին գերմանացիք նշանակեցին 5 գեղեցիկ կոլեր, իսկ պրազիլցիք անակնկալի եկան:

Երկրորդ կիսախաղին մրցումը եղաւ դանդաղ, թէև Պրազիլ առաջին 15 վայրկեաններուն քանի մը ստոյգ առիթներ ստեղծեց, սակայն Գերմանիոյ ինքնավստահութիւնը զգալի էր: Մրցումը վերջ գտաւ 7-1 անհաւատալի արդիւնքով, եւ Գերմանիան իրաւունք ստացաւ աւարտականին մրցելու Արժանթինի դէմ: Նշեմ, որ Պրազիլ 1975-էն ետք երբեք չէ պարտուած իր երկրին մէջ:



Երրորդ եւ չորրորդ տեղին համար Պրազիլ ճակատեցաւ Հոլանտայի դէմ եւ դարձեալ 3-0 արդիւնքով պարտուած հեռացաւ խաղավայրէն:

Անկեղծօրէն խոստովանիմ, որ այսպիսի գէշ մոնտիալի աւարտականի մրցումի մը ակնատես չեմ եղած: Մրցումին մինչեւ 113 վայրկեանները երկուստեք լաւ յարձակումի չհանդիպեցանք, երկու կազմերու բերդապահներուն գործ չեղաւ... մանաւանդ Գերմանիան: Չըսեմ շատ, սակայն գէշ խաղցաւ՝ իր համակիրները յուսախաբ ընելով: Ուր էր Պրազիլի դէմ մրցումին ընթացքին իր կիրարկած ուժը աւելի ճիշդը՝ Արժանթին չձգեց, որ խաղայ: Արժանթին լաւ սերտած էր իր մրցակիցը: Ի վերջոյ 113-րդ վայրկեանին Մարիօ Կէօթցէ նշանակեց Գերմանիոյ յաղթանակի կոլը, եւ 4-րդ անգամ ըլլալով Գերմանիա աշխարհի ախոյեան եղաւ:

Յիշեցնեմ, որ 24 տարի առաջ Գերմանիան նոյն արդիւնքով (1-0) յաղթած էր իր մրցակիցին:

Կարելոյրը յաղթելն է, չէ՞...:

Սպասենք 2018-ին, թէ ի՞նչ պիտի պատահի Ռուսիոյ մոնտիալին:

Առայժմ՝ ցտեսութիւն:

ՍԱՐԳԻՍ ՏԵՄԻՐՃԵԱՆ

ԿՆՈՋԱԿԱՆ

Բնական Միջոցներ՝ Բերնին Անախորժ Հոտը Չքացնելու Համար

Գեշ հոտոտ դերնին պատճառները այլազան են՝ փտած ակոռներ, հիւանդ լինտեր, մարսողական հարցեր, եւ այլն... Բերնին մեջ կան միլիոնաւոր մանրէներ, որոնցմէ պէտք է ձերբազատիլ մաքուր շունչ ունենալու համար:

Ահաւասիկ քանի մը բնական միջոց՝ բերնին վատ հոտերը չէզոքացնելու համար:

1-Ակոռները խոզանակել

Բերնին մանրէները չէզոքացնելու համար անհրաժեշտ է ակոռները խոզանակել ճաշի ժամերէն ետք: Ակոռներուն միջեւ մնացած ուտելիքի մնացորդները գեշ հոտերու պատճառ կը դառնան:



2-Լեզուն մաքրել

Որքան ալ տարօրինակ թուի, այո՛, լեզուն պէտք է օրական մաքրել դեղարանները վաճառուող փոքրիկ իրով մը՝ դարձեալ զայն մանրէներէն ձերբազատելու եւ գեշ հոտերը չէզոքացնելու համար:

3-Ջուր խմել

Անհրաժեշտ է օրական առնուազն 1,5 լիթր ջուր խմել, արդարեւ, յաճախ բերնի գեշ հոտը հետեւանք է ջուրի պակասի:



4-Բերանը ցոլուել

Օրական քանի մը անգամ ձեր բերանը ցոլուեցէք պիքարպոնաթ տը սուտով կամ մեխակի գամերով պատրաստուած հեղուկներով:

5-Կիտրոն ուտել

Ազդու միջոց մըն է նաեւ կիտրոնը: Եթէ ձեր շունչը գեշ կը հոտի կեղուրուած կիտրոն կերէք կամ անոր հիւթը խմեցէք:

6-Ազատքեղ ծամել

Իւրաքանչիւր ճաշի ժամէ ետք թարմ ազատքեղ ծամեցէք ձեր շունչը թարմացնելու եւ բերնին գեշ հոտը չքացնելու համար:

7-Մեխակի գամ ծամել

Այո՛, առէք մեխակի գամ մը եւ ակոռներով ծամմեցէք՝ մաքուր շունչ ապահովելու համար:

8-Կասիայի փայտիկ ծամել

Բերնին անախորժ հոտերը չքացնելու համար նոյնքան ազդու է նաև կասիայի փայտիկ մը ծամելը. փորձեցե՛ք:

9-Անանուխ ծամել

Թարմ անանուխի քանի մը տերեւ ծամեցե՛ք եւ անմիջապէս կը վերագտնե՛ք ձեր թարմ շունչը:

10-Սուրճի հատիկներ ծամել

Չաղացուած սուրճի հատիկներ ծամեցե՛ք, եւ ձեր բերնէն անմիջապէս կը չքանան գէշ հոտերը:



Պիստակ Կերէք



Պիստակը գոյութիւն ունէր Ք.Ա. 7000 թուականներուն: Անիկա մշակուած է միջերկրականեան երկիրներու եւ Ծայրագոյն Արեւելքի մէջ: Պիստակը Եւրոպա մուտք գործած է Լուի 14-րդի. օրով, իսկ 20-րդ դարու սկիզբը զայն մշակած են Մ. Նահանգներու մէջ, յատկապէս՝ Քալիֆորնիա:

Ներկայիս աշխարհի մէջ պիստակի մեծագոյն արտադրողներն են՝ Իրանը, Մ. Նահանգները, Թուրքիան,

Սուրիան, Չինաստանը եւ Յունաստանը:

Բոլորէն սիրուած եւ գնահատուած պիստակը հարուստ է աւելի քան 30 տեսակի կենսանիւթերով եւ հանքայիններով, բայց նաև՝ անթիօքսիտաններով եւ ճարպաթթուներով: Հետեւաբար օրական չափաւոր պիստակ կերէք:

- ա.- Հոգեկան ընկճումէ ձերբազատելու համար:
- բ.- Լաւ քոլեսթերոլին տոկոսը բարձրացնելու եւ գէշ քոլեսթերոլը պակսեցնելու համար:
- գ.- Անակնկալ ակոթայի ցաւը մեղմացնելու համար:
- դ.- Թոքերու քաղցկեղի հաւանականութիւնը պակսեցնելու համար:
- ե.- Տարիքի հետ կապուած աչքի որոշ հիւանդութիւններէ պաշտպանուելու համար:
- զ.- Եթէ մարզիկ էք:

է.- Եթէ սննդականոնի կը հետեւիք: Մսնդագէտներ կ'արտօնեն օրական 30 կրամ պիստակ ուտել, ինչ որ կը համապատասխանէ շուրջ 45 պիստակ եւ համագօր է 160 ջերմութի: